ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 19.12.2014 Թ. N «ԲԸՀԱՇՁԲ-14/12-1»

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

18 մարտի 2015 թ.

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն, ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ նաև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի շենքի վերակառուցման ու հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման 19.12.2014 թ. կողմերի միջև կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/12-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի ապրիլի 9-ը՝ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աշխատանքի կատարման ժամկետի ավարտը սյունակի «*վերջիններիս ֆինանսական ապահովման օրվանից՝ 90 օրացուցային օրվա ընթացքում*» արտահայտությունը փոխարինել «*2015 թվականի ապրիլի 9-ը*» արտահայտությամբ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

**Պատվիրատու**

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ

ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,

կառավարական տուն 3,

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի

Գործառնական վարչություն

հ/հ 900011000560

ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան

(ստորագրություն)

**Կատարող**

«ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ

Ք. Երևան, Աբովյան 29 շենք, բն. 15

«Ամերիաբանկ» ՓԲԸ

հ/հ 1570015122250100

ՀՎՀՀ 01553657

Տնօրեն Վ. Սարգսյան

(ստորագրություն)